

ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ»

Բաց բաժնետիրական ընկերություն

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

N 1-09U 15.05.2009թ.

հաշվետվության համարն ու ամսաթիվը

0012, ք. Երևան, Վ. Վաղարշյան 20, հեռ.26-08-62, ֆաքս 26-11-00, e-mail: info@arpa-sevan.am

գտնվելու վայրը, հասցեն, կապի միջոցները

Տեղաբաշխված արժեթղթերի դասը	հասարակ անվանական բաժնետոմսեր
Արժեթղթերի քանակը	20452 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	2500 դրամ

«Սենք ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են»:

«Արփա-Սևան» ԲԲԸ

Տնօրեն՝

Ա. Դավթյան

«ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ» ԲԲԸ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունը իր մեջ ներառում է ընկերության 2009թ. առաջին եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները և կառավարման մարմինների զեկույցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի վերաբերյալ, որոնք էական ազդեցություն են ունեցել ընկերության ֆինանսական վիճակի և շահութաբերության վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԷԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ընկերության արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 447232 հազ. դր.:

Իրացված արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը, իրացման և վարչական ծախսերը միասին կազմել են 635452 հազ. դր.:

Ծախսերի նման բարձր մակարդակի հիմնական պատճառը իրացման և վարչական ծախսերի մեծությունն է, որոնք հաստատուն ծախսեր են և իրացման փոքր ծավալների դեպքում մեծ ազդեցություն են ունենում ընկերության շահույթի /վնասի/ վրա: Արդյունքում իրացումից վնասը կազմել է 188220 հազ.դր.:

Նախորդ ժամանակաշրջանի համեմատ աճել են նաև գործառնական այլ ծախսերը, ֆինանսական և այլ ոչ գործառնական ծախսերը: Ընդհանուր առմամբ սովորական գործունեությունից վնասը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 302579 հազ. դր.:

Վերը նշված փաստը իր բացասական ազդեցությունն է թողել ընկերության` կուտակված շահույթի մեծության վրա, որը նվազել է 312264 հազ.դրամով և կազմել նախորդ ժամանակահատվածի 67.6%,վերջինս էլ ազդել է սեփական կապիտալի մեծության վրա, որը կազմել է նախորդ ժամանակահատվածի 80.9% :

Սեփական կապիտալում այլ փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Ընկերության ոչ ընթացիկ ակտիվները նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել են 72938 հազ.դր.որը կազմում է - 95.5%, հիմնական միջոցների մաշվածքի չափով:

Ընկերության ընթացիկ ակտիվները նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել են 124536 հազ.դր., որը կազմում է - 89.1%, որի հիմնական պատճառը դեբիտորական պարտքերի նվազումն է :

Արդյունքում ընդհանուր ակտիվները նախորդ ժամանակաշրջանի համեմատ նվազել են 197474 հազ.դր., որը կազմում է - 93.1%:

Նախորդ ժամանակահատվածի համեմատ ոչ ընթացիկ պարտավորությունները մնացել են անփոփոխ իսկ ընթացիկ պարտավորությունները աճել են 114790 հազ. դր.,(112%), որի հիմնական պատճառը կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի աճն է:

Կից ներկայացնում են միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

«Արփա-Սևան» ԲԲԸ
Տնօրեն՝

Ա. Դավթյան

Կատարող` Զ. Վարդանյան հեռ.261190

